Հայտարարություն կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվա առթիվ

2018թ. թավշյա հեղափոխության մեջ ներգրավված բազմահազար քաղաքացիների նպատակը կոռումպացված համակարգից ձերբազատումն ու արդարության հաստատումն էր, ինչը նոր իշխանությունների առջև դնում էր մեծ պահանջներ: Հայաստանի նոր կառավարությունը հայտարարեց կոռուպցիայի դեմ անզիջում պայքար տանելու մասին, նախաձեռնեց և սկսեց կյանքի կոչել հակակոռուպցիոն բարեփոխումների հավակնոտ ծրագիր, սկսեց նոր հակակոռուպցիոն ինստիտուտների ձևավորման գործընթացը: Թեև շատ տեղացի և արտասահմանցի փորձագետներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ քննադատում էին իրականացվող բարեփոխումների որակը և արագությունը, հանրության շրջանում կար ընդհանուր ըմբռնում, որ Հայաստանը զարգանում է ճիշտ ճանապարհով և այդ առումով կան ակնկալիքներ և հանրային աջակցություն: Նման վերաբերմունքը փաստվել է հանրային կարծիքի ուսումնասիրություններում, օրինակ, 2019 թվականին Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամի Հայաստանի համատեղ իրականացված ուսումնասիրությունում[i]:

2018-2019 թվականներին Հայաստանում տեղի ունեցող դրական զարգացումներն արտացոլվել են միջազգային հետազոտություններում և համաթվերում: Այսպես, Թրանսփարենսի Ինթերնեշնլ (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն ոչ կառավարական կազմակերպության Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) Հայաստանի մեծությունը հեղափոխությունից հետո 35-ից աճեց մինչև 49, այսինքն՝ 14 միավորով, որը աշխարհի մասշտաբով լավագույն արդյունքն էր: Զգալի դրական աճ գրանցեցին նաև Համաշխարհային բանկի Կառավարման համաշխարհային ցուցանիշները (World Governance Indicators), ներառյալ՝ դրա Կոռուպցիայի վերահսկում ցուցանիշը[ii] և Ֆրիդոմ Հաուս միջազգային կազմակերպության Անցումային փուլում գտնվող երկրների (Nations in Transit) Ժողովրդավարության համաթիվը (Democracy score)[iii]:

2020թ.-ից Հայաստանի առջև ծառացած մի շարք մարտահրավերներ, այդ թվում՝ անվտանգային սպառնալիքները, կորոնավիրուսի համավարակը, ներքաղաքական լարումները դանդաղեցրեցին բարեփոխումները: Հանրային կարծիքի ուսումնասիրությունները սկսեցին արձանագրել բացասական միտումներ, իսկ միջազգային համաթվերում դադարեց աճը:

ԱՄՆ Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) կողմից 2022թ. հունվարին հրապարակված հեռախոսային հարցման տվյալներով քաղաքացիների 46%-ը գտնում է, որ երկիրը գնում է սխալ ուղղությամբ և միայն 34%-ի կարծիքով է, որ այն գնում է ճիշտ ուղղությամբ: Մյուս կողմից հարցվածների 61%-ի կարծիքով երկիրը կառավարվում է՝ ելնելով որոշ խմբերի շահերից և միայն 31%-ն է կարծում, որ այն կառավարվում է՝ ելնելով մեծամասնության շահերից[iv]: Հետաքրքիր է նշել, որ ՄՀԻ-ի կողմից 2021թ. ապրիլ/մայիսին անցկացված հարցման տվյալներով քաղաքացիների միայն 20%-ն էր կարծում, որ երկիրը գնում էր սխալ ուղղությամբ, իսկ 43%-ի կարծիքով այն գնում էր այն գնում էր ճիշտ ուղղությամբ:[v]

ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի 2022թ. նոյեմբերին հրապարակած հանրային կարծիքի ուսումնասիրությունը ևս արձանագրեց զգալի հետընթաց[vi]: Մասնավորապես, 2019 թվականին Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) և ՀՌԿԿ-Հայաստանի վերը

նշված համատեղ իրականացված հետազոտության արդյունքների համեմատությամբ պարզվեց, որ՝

- «դատարանները և դատախազությունը մեծապես կոռումպացված են» պատասխանների քանակը 12%-ից աճել է 32.5%,
- «վարչապետը և նրա աշխատակազմը բնավ կոռումպացված չեն» կարծողների թիվը 75%-ից իջել է 34%-ի,
- «կաշառքի դեպքերի հաճախականությունը նվազել է» պատասխանողների թիվը 91%-ից իջել է 66.5%-ի,
- «կաշառքի չափերը նվազել են» կարծողների թիվը 82.4%-ից իջել է մինչև 42%

2022 թվականի ընթացքում կոռուպցիայի և հակառուպցիոն քաղաքականության գծով տեղացի և միջազգային փորձագետների, այդ թեմաները լուսաբանող լրագրողների նյութերը, հասարակական մասնագիտացած կազմակերպությունների և անկախ փորձագետների ուսումնասիրությունները և վերլուծությունները ևս փաստում են, որ առկա են ակնհայտ բացասական միտումներ և խնդրահարույց դրսևորումներ, որոնք կասկածի տակ են դնում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը, իսկ երբեմն նույնիսկ քաղաքական կամքը:

2022 թվականի ապրիլին Հայաստանում կոռուպցիայի իրավիճակին և հակակոռուպցիոն քաղաքականությանն անդրադարձել են Թրանսփարենսի Ինթերնեշնլի քարտուղարությունը և Նորվեգիայում գործող U4 միջազգային հակակոռուպցիոն կենտրոնը իրենց համատեղ «Ակնարկ Հայաստանում կոռուպցիայի և հակակոռուպցիայի մասին» հրապարակմամբ:[vii] Ակնարկի հեղինակները նշում են, որ թավշյա հեղափոխությունից հետո նոր իշխանությունները կյանքի կոչեցին մի շարք իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնք հասարակության մեջ առաջ բերեցին դրական սպասելիքներ և ընկալումներ կոռուպցիայի նվազման տեսանկյունից: Սակայն, միևնույն ժամանակ մտահոգություն են հայտնում, որ իրականացվող բարեփոխումները կարող է չհանգեցնեն կոռուպցիայի մակարդակի կայուն և շարունակական նվազման, և որ դեռևս առկա են թերություններ կոռուպցիայի կանխարգելման և հակազդման համակարգերում, ինչն, առաջին հերթին, վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի հայտնաբերմանն ու բռնագանձմանը և դատական համակարգի բարեվարքությանը: Որպես կոռուպցիայի առումով առավել խոցելի ոլորտներ՝ ակնարկի հեղինակները նշել են դատական համակարգը, անվտանգության համակարգը, հանրային գնումները և հանքարդյունաբերությունը:

2022-ի ընթացքում ԹԻՀԿ-ն իր (այդ թվում՝ գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ համատեղ) հրապարակային հայտարարություններում և դիրքորոշումներում բազմիցս անդրադարձել է Հայաստանում կոռուպցիայի իրավիճակին և դրա հաղթահարման խնդիրներին: Ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ կոռուպցիային առնչվող ներկայիս մարտահրավերներն են իշխանության ճյուղերի տարանջատման ու հավասարակշռման մեխանիզմների թերացումը, իրավապահ և դատական մարմինների ձևավորման ու բարեվարքության խնդիրները, կասկածելի կենսագրությամբ անձանց բարձր պաշտոնների նշանակումները և հովանավորչության դրսևորումները, խնդրահարույց պետական գնումները և բարձրաստիճան պաշտոնյաների փոխկապակցված անձանց կասկածելի հաջողությունները մրցույթներում, խոշոր բիզնեսի և քաղաքականության սերտաճման միտումները, քաղաքացիական տարածքի նեղացման սպառնալիքները՝ մասնավորապես հանքարդյունաբերության ոլորտում, ընդհանուր՝ ոչ թափանցիկ, ոչ մասնակցային և ոչ հաշվետու կառավարումը և կոռուպցիոն նոր սխեմաների

ձևավորումը: Այս խնդիրները ներկայումս դրվագային են, սակայն դրանք արագորեն կարող են ամրապնդվել և ձևավորել պետության զավթման մի նոր համակարգ, ինչն անթույլատրելի է:

Հայաստանի կառավարությունը պետք է լրջորեն վերագնահատի իր գործողություններն ու ձախողումները կոռուպցիայի դեմ պայքարի դաշտում և շուտափույթ ձեռնարկի գործուն ու արդյունավետ քայլեր, որոնք կօգնեն վերականգնելու հանրային վստահությունը:

[i] https://transparency.am/hy/publication/203

[ii] https://info.worldbank.org/governance/wgi/Home/Reports : Կոռուպցիայի կառավարման ցուցանիշը 2019թ.-ին 2017թ. համեմատ լավացավ 0.41-ով (-0.61-ից բարձրացավ մինչև -0.2՝ -2.5-ից +2.5 սանդղակի վրա):

[iii] https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2022 , https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2021 , https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2020 , https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2019 և https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2018 : Կոռուպցիայի ենթահամաթիվը 2019թ.-ին 2017թ. համեմատ լավացավ 0.5-ով (0.5-ից բարձրացավ մինչև 3.0՝ 1-ից 7 սանդղակի վրա):

[iv] https://www.iri.org/resources/public-opinion-surveyresidents-of-armenia/ Տվյալները հավաքագրվել են 2021թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

[v] https://www.iri.org/resources/iri-armenia-poll-shows-concerns-for-political-instability-skepticism-for-covid-19-vaccines-strong-voter-enthusiasm/

[vi]https://www.crrc.am/hy/%D5%B0%D6%80%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80/9851 : Տվյալները հավաքագրվել են 2021թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

[vii] https://www.u4.no/publications/armenia-overview-of-corruption-and-anti-corruption [4] Համաձայն զեկույցի՝ Չորրորդ փուլի գնահատման զեկույցում ներառված 18 պարտավորություններից բավարար չափով կատարված են համարվել միայն 7-ը: Տե՛ս Զեկույցի 75-րդ կետը:

[5] https://rm.coe.int/greco-2021-7-eng-decisions-greco-88/1680a3ef4f)